ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/102

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7», «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/9», «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/3» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգ, բժշկական պարագաների և դեղորայքի ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7-2», «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/9-11» և «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/3-13»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5261-2020 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 07.04.2020թ. թիվ 70 գրության հիման վրա, 09.04.2020թ.-ին «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 10.04.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/102 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել www.gnumner.am կայքում:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.04.2020թ.-ին:

2. ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 07.04.2020թ. թիվ 70 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

««Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից իրականացված գնումների ընթացքում «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի և «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի միջև կնքվել են ապրանքների մատակարարման պայմանագրեր հետևյալ ծածկագրերով՝ <ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7-2>, <ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/9-11> և <ԱԲԿ- ԳՀ-ԱՊՁԲ-2020/3-13>:

Սակայն «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ » ՍՊԸ-ն հանդիսանալով անպարտաճանաչ մասնակից պայմանագրերի ոչ մի չափաբաժնով մատակարարում չի կատարել:

Պայմանագրերի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրերի 2.1.7.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ... բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 13.04.2020թ.-ի գրությամբ դիմել է «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5261-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն մասնակցել է «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված թթ. ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/3, ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7 և ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ- 2020/9 ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերին և կնքել է պայմանագրեր պատվիրատուի հետ:

Չցանկանալով անդրադառնալ և մեկնաբանել պատվիրատուի կողմից ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ պարոն Կ. Բրուտյանին ուղղված գրության մեջ զետեղված ոչ կոռեկտ արտահայտությունները վերաբերյալ մեր կազմակերպությանը, քանի որ մենք ինքներս չենք ցանկանում իջնել նման ցածր մակարդակի, ուղղակի ասենք, որ նույն գրության մեջ բերված փաստերը զուրկ են հիմնավորումից:

Մասնավորապես պատվիրատուն իր գրության մեջ նշել է. «...պայմանագրերի ոչ մի չափաբաժնով մատակարարում չի կատարել»: Ուղղակի սույն Դիրքորոշմանը կցում ենք այն հաշիվ ապրանքագրերի պատճենները, որոնցով վերոնշյալ գնման ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերի շրջանակներում «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն իրականացրել է մատակարարումներ պատվիրատու «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին:

Խնդրում ենք ֆիքսել այս, փաստը, քանի որ, փաստորեն, «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն դիտավորյալ կեղծ տեղեկատվություն է փոխանցում ՀՀ ֆինանսների

նախարարությանը նպատակ հետապնդելով խզել բոլոր պայմանագրերը մեր կազմակերպության հետ: Ենթադրում ենք պատճառը կարող է լինել սուբյեկտիվ, այլ ոչ թե օբյեկտիվ:

Նաև չենք ժխտում, որ կան ապրանքներ, որոնց մատակարարումը պատվիրատուին չեն կատարվել պայմանագրով ֆիքսված 5-օրյա ժամկետում: Սակայն ուշացման պատճառը եղել է մեր կամքից և ցանկությունից անկախ պայմանավորված ֆորս-մաժորային իրավիճակով: Տփալ ապրանքները պետք է ներկրվեին արտերկրից, հիմնականում Չինաստանից, սակայն ընթացիկ տարվա հունվարից խզվեց հաղորդակցությունը

Չինաստանի հետ, իսկ հետո արդեն սկսվեց քաոսային իրավիճակ ամբողջ աշխարհում Հնդկաստան, Ուկրաինա և այլն: Կազմակերպությունները և արտադրողները չեն աշխատում, օդային բեռնափոխադրումը ամբողջովին դադարեցված է, նույնիսկ ծովային փոխադրումներն են դադարեցված .... իսկ պատվիրատուն պահանջում է, որ մատակարարենք 5 օրվա ընթացքում:

Ավելացնենք, որ պատվիրատուի հետ բոլոր 3 պայմանագրերն էլ ուժի մեջ են մտել 2020թ-ի փետրվարի 10-ից, երբ որոշ երկրներում, այդ թվում նաև Չինաստանում, համավարակը հասել էր գագաթնակետին:

Վստահեցնում ենք, որ կորոնավիրուսի համավարակով պայմանավորված ներկայիս պայմաններում դա ուղղակի անհնար է պլանավորել բոլոր մատակարարումները անթերի և կատարել բոլոր ապրանքների մատակարարումը 5-օրյա ժամկետում:

Հետևաբար, հաշվի առնելով վերոնշյալ փաստերը, ներկայացված փաստաթղթերը և բերված մեկնաբանությունները, խնդրում ենք Ձեզ չներառել մեր կազմակերպությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցանկում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/102 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.01.2020թ.-ին, 07.02.2020թ.-ին և 08.01.2020թ.-ին կնքվել են համապատասխանաբար թիվ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7-2», «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/9-11» և

«ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/3-13» ծածկագրով պետական գնման պայմանագրեր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Թիվ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7-2», «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/9-11» և «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/3-13» ծածկագրով պետական գնման պայմանագրերի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ.-ը պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո, իսկ երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը պետք է իրականացվեր 2 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.02.2020թ.-ին կնքվել են թիվ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7-2», «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/9-11» և «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/3-13» ծածկագրով պետական գնման պայմանագրերի Համաձայնագրեր (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

Համաձայնագրի 2.1 կետով սահմանվել է, որ Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

թիվ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7-2», «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/9-11» և «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/3-13» ծածկագրերով պետական գնման պայմանագրերի ապրանքների մատակարարման պահանջագրեր են ներկայացվել Մասնակցին 05.03.2020թ.-ին:

www.gnumner.am համացանցային կայքում 07.04.2020թ.-ին հրապարակված թիվ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7-2», «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/9-11» և «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/3-13» ծածկագրերով պետական գնման պայմանագրերի միակողմանի լուծման մասին ծանուցումների համաձայն՝ ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.01.2020թ.-ին, 07.02.2020թ.-ին և 08.01.2020թ.-ին կնքված համապատասխանաբար թիվ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7-2», «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/9-11» և «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/3-13» ծածկագրերով պետական գնման պայմանագրերը ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 07.04.2020թ.-ին միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել են մատակարարման ժամկետները):

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ. թիվ 26/26-1/5261-2020 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը

պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.01.2020թ.-ին, 07.02.2020թ.-ին և 08.01.2020թ.-ին կնքված համապատասխանաբար թիվ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7-2», «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/9-11» և «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/3-13» ծածկագրով պետական գնման պայմանագրերի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ.-ը պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո, իսկ երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը պետք է իրականացվեր 2 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.02.2020թ.-ին կնքված թիվ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7-2», «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/9-11» և «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/3-13» ծածկագրով պետական գնման պայմանագրերի Համաձայնագրերի 2.1 կետով սահմանվել է, որ Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

թիվ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7-2», «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/9-11» և «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/3-13» ծածկագրերով պետական գնման պայմանագրերի ապրանքների մատակարարման պահանջագրեր են ներկայացվել Մասնակցին 05.03.2020թ.-ին:

www.gnumner.am համացանցային կայքում 07.04.2020թ.-ին հրապարակված թիվ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7-2», «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/9-11» և «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/3-13» ծածկագրերով պետական գնման պայմանագրերի միակողմանի լուծման մասին ծանուցումների համաձայն՝ ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.01.2020թ.-ին, 07.02.2020թ.-ին և 08.01.2020թ.-ին կնքված համապատասխանաբար թիվ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7-2», «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/9-11» և «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/3-13» ծածկագրերով պետական գնման պայմանագրերը ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 07.04.2020թ.-ին միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել են մատակարարման ժամկետները):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 07.04.2020թ.-ին լուծել է ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.01.2020թ.-ին, 07.02.2020թ.-ին և 08.01.2020թ.-ին կնքված համապատասխանաբար թիվ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7-2», «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/9-11» և «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/3-13» ծածկագրերով պետական գնման պայմանագրերը՝ www.gnumner.am համացանցային կայքում 07.04.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 05.03.2020թ.-ին Պատվիրատու կողմից ներկայացված թիվ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7-2», «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/9-11» և «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/3-13» ծածկագրերով պետական գնման պայմանագրերի ապրանքների մատակարարման պահանջագրերով նշված ապրանքները տեխնիկական բնութագրով սահմանված

ժամկետում՝ պատվերը ստանալուց 2 աշխատանքային օրվա ընթացքում չի մատակարարվել:

Անդրադառնալով Մասնակցի կողմից վկայակոչված ֆորս-մաժորային իրավիճակով պայմանավորված մատակարարումները կատարելու անհնարինությանը, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պայմանագրի 7-րդ գլխով սահմանված անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Սույն գործում առկա փաստերի ուսումնասիրության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակիցը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, չի ապացուցում որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Ընդ որում՝ թիվ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/9-11» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագրով ապրանքի արտադրող և ծագման երկիր նշվել է «Չինաստան, Ռուսաստան, Հնդկաստան», իսկ թիվ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7-2» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագրով ապրանքի արտադրող և ծագման երկիր նշվել է «Չինաստան, Ռուսաստան, Հնդկաստան» թիվ 38, 39, 42, 43, 44, 45, 65 և 75 չափաբաժինների մասով, իսկ 53-56 չափաբաժնի մասով՝ «Հնդկաստան»:

Անդրադառնալով Մասնակցի կողմից իր դիրքորոշմանը կից ներկայացված մինչև 05.03.2020թ.-ը դուրս գրված հաշիվ ապրանքագրերին, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ դրանցով չի հաստատվում Մասնակցի կողմից 05.03.2020թ.-ին Պատվիրատու կողմից ներկայացված թիվ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7-2», «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/9-11» և «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/3-13» ծածկագրերով պետական գնման պայմանագրերի ապրանքների մատակարարման պահանջագրերով նշված ապրանքները տեխնիկական բնութագրով սահմանված ժամկետում՝ պատվերը ստանալուց 2 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարելու հանգամանքը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ. թիվ 26/26-1/5261-2020 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/102 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ